



## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՊԱՏ ԿԱՄ ՆՈՐ-ՎԱՐԱԳ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ամշագինի շրջանի հյուսիս-արևմբայան սահմանին զուգահեռ հոսող Հասանի-Զուր (Հասան-Սու) գետակի ձորում է գտնվում այս կարևոր պատմական հուշարձանների խոմբը, որը սովորաբար կոչվում է Վարագավանք:

Բանովկ ճանապարհներից հետու գտնվելու պատճառով, այդ հուշարձանները շատ քիչ են այցելվում, և այդ իսկ պատճառով հանրածանոթ չեն:

Երևանից Վարագավանք գնալու համար պետք է Դիլիջան—Իջևան խճողով գնալ:

### ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

Հուշարձանների գլխավոր խոմբը, որն առաջ պարսպված է նղել, բաղկացած է երեք մասից.

1. Անապատ, որը բաղկացած է դեղնակույն սրբատաշ քարերով. երեսպատված 4 շենքից, համարյա հավասարակող քառանկյունի տարածություն է գրավում վանքի հարավյային մասում.

ա. Գավիթ. իր երկարությամբ ձգված է հարավից հյուսիս և բռնում է Անապատի քառակոսի տարածության արևմտյան մասը. Այդ շենքը եղել է թաղապատ, որին ապացուց են պատերին կից մնացած թաղակալ կամարների հենարան կազմող կիսամուլթերը. Ներկայումս գավիթի տանիքը և հարավյային պատն ամբողջությամբ փլած են: Հարավյային կողմից իր տեղում մնացել է միայն պատին կից եղած արևելյան ծայրի կիսամուլթը:

Գավիթի մեջ են բացվում այդ խմբի մնա-

յացատաֆա կայարանը և այստեղից դեպի մովուզ տանող ճանապարհով 3—4 կիլոմետր գնալուց հետո թեքվել աշ, դեպի Պառավաքար և այդտեղից Հախում գյուղը: Շըրջանային կենտրոնից՝ Բերդից՝ Հախում կարելի է գնալ Զինջինի վրայով:

Հուշարձանները գտնվում են Հախումից հարավ-արևմուտք, Հասանի-Զուր գետակի ձախ ափին ձգվող անտառապատ լեռնաշրջանից բարձրության կիսում, գյուղից մոտ շկլում հետո հեռավորությամբ, մի փոքրիկ բացուտում: Դիրքը գեղեցիկ է և հորիզոնն ընդարձակ:

### ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

յած հետեւալ երեք շենքերը, սկսած հյուսիսային եզրից:

բ. Տապանատում, որը մի փոքրիկ թաղապատ մասում մատուռ է:

գ. Եկեղեցին գրավում է Անապատի արևելյան կիսի կենտրոնական մասը, նույնպես փոքրիկ թաղապատ շենք է, նշանավոր իր արևելյան արսիդով, որը մեջտեղից միջնորմով երկու մասի է բաժանված, որով ստացվում է զույգ բեմ, մոտ 3 մետր լայնություն ունեցող եկեղեցովում: Այս տիպի եկեղեցին հազվագեպ երեսով է մեր կրոնական հուշարձանների մեջ: Եկեղեցու թաղը կիսով շափ քանդված է: Գեղեցիկ կերպով ձևավորված է մուտքը փոքրիկ կիսասլումներով, քանդակներով և աշից ու ձախից պատի մեջ ամրացված խաչքարերով:

դ. Հարավյային եկեղեցուն կից է մի մատուռ, որն իր շափերով համապատասխանում է ապագանատանը:

Վերջին երեք շենքերից միշինի, այսինքն և կեղեցու արևելյան ճակատը մոտ 2 մետր դորս է ընկնուա տապանատան և մատուռի համապատասխան ճակատներից:

Երեք շենքերի տանիքներն էլ խարխլված են և արևելյան ճակատի սրբատաշ քարերը թափված կամ քանդված:

2. Աստվածածին կարուղիկե. 13-րդ դարի համար սովորական տիպի՝ կենտրոնական գմբեթակիր՝ մի գեղեցիկ շենք է, բարձր, սլացիկ գմբեթով, առանց սյուների, կից Անապատի հյուսիսային պատին: Այս եկեղեցու անկյուններում կան չորս զույգ կրկնահարկ խորաններ. արսիդի կողքերի վերին հարկի խորանների մուտքը բեմից է, իսկ արևմտյան կողմի վերին հարկերը կարելի է բարձրանալ պատերի մեջ հագցրված քարի աստիճաններով: Ոնի երկու դռու, որոնցից հարավայինը բացվում է Անապատի գավթի մեջ, իսկ արևմտյանը՝ այդ կողմից եկեղեցուն կից, հետագայում կառուցված, ժամատան մեջ:

Եկեղեցու չափերն են՝  $15,6 \times 10,7$  մետր: Դրանց և ներսից սրբատաշ քարերով երեսապատված այս հուշարձանը ամենից լավ դրությամբ մնացած շենքն է ամբողջ խմբից: Տեղ-տեղ թափված են պատերի արտաքին երեսպատ քարերը և տանիքի կղմինտրաձև սալերի մեծագույն մասը և գմբեթի վեղարի ծածատան մեջ:

Առհասարակ այս շենքը տպավորիլ է իր պարզությամբ, զերծ զարդարանքների խճողությամբ: Արտաքին զարդարանքի ամբողջ թափը կենտրոնացած է եկեղեցու արևմտյան մուտքի շրջանակի վրա: Այդ լայն շրջանակը հիմանալի է իր զեղարկվածական ձևավորումով, որտեղ շինող վարպետները արտաքայտել են իրենց բարձր ճաշակը գոնավոր քարերի ներդաշնակ դասավորության մեջ և

քանդակելու նույրը արվեստը: Երկրաշափական ձևեր ունեցող մուգ մանիշակագույն երաց կապուտ քարերից է կազմված այդ նշանավոր և սքանչելի մոզաիկ շրջանակը, որի մուգ մանիշակագույն քարերի վրա նրբությամբ և գեղարվեստորեն քանդակված են զանազան կենդանիներ, հուշկապարիկներ և ծաղկներ, մեկը մյուսից տարրեր ձևերով և բոլանդակությամբ:

3. Ժամատան. շինգած է Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում: Զափերն են  $14,5 \times 13,2$  մետր: Ըստ երևոյթին դա մի գեղեցիկ կառուցվածք է եղել, որից մնացել են միայն չորս պատերը և դրանց կից երկուական մուցիթեր, որոնց գոյությունը թույլ է տալիս ենթադրելու, որ այդ մուցիթերի վրայից բարձրացել են առաստաղը գտնկող կամարները, որոնց երկրորդ ոտքերը գենված են եղել չորս սյուների վրա, կենարոնում կազմելով երդիկ: Թե՛ սյուները և թե՛ կամարներն ու առաստաղը քանդված են և տեղում դրանց հետքն անգամ չի մնացել:

Ժամատան մուտքը հարավային պատի արևմտյան ծալքում է բացված, իսկ արևելյան ճակատում Աստվածածին եկեղեցու վերոհիշյալ գեղեցկաքանդակ շրջանակ ունեցող դռուն է:

Ժամատան մեջ մնացել են մի քանի հատ խաչքարեր:

Վանքի նկարագրությունը վերջացնելով համար մնում է հիշել, որ դա մի ժամանակ ունեցել է պարիսս և միաբանության բնակատեղի, որոնց անշան հետքերն են մնացել: Ունեցել է նաև չրմուղ, Վանքի հյուսիսային կողմում գտնվում են գերեզմանատունը և մի մատուռի մնացորդները: Մի երկրորդ մատուռ, խարխուզ դրությամբ, գրտնրվում է վանքից հարավ ընկած ձորակում, մոտ 100 մետր հեռավորության վրա:

### ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ

Մի կողմից վիմական և պատմական աղբյուրներում և մյուս կողմից նոր գրականության մեջ, հուշարձանների խմբական անունը տարբեր է հիշատակվում: Վիմագրության մեջ (արձ. № 3, 12 և 20) վանքը հիշվում է Անապատ անունով: Նույն անունն են տուիսի վանքին նաև պատմագիրներ Կիրակոս Գանձակեցին<sup>2</sup> և Վարդան Վարդապետը<sup>3</sup>: Եր-

1. Աստվածածին եկեղեցու և ժամատան չափերը վերջած են Մակար եպիսկոպոս Բարիուգարյանի «Արցախ» աշխատությունից (էջ 366), թարու 1995 թ.:

2. Կիրակոսի Գանձակեցոյ պատմությին Հալոց, Թիֆլիս, 1910 թ.:

3. Վարդանայ Վարդապետի հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1861 թ.:

կուսն էլ Անապատը կապակցում են նորբերդի հետ. այսպես, Գանձակեցին հիշատակում է. «... ի վանքն, որ Անապատ կոչի, հուապ ի նոր բերդն...» (էջ 146), իսկ Վարդան պատմիչը՝ «... ի հուակատը վանսն նոր բերդին, Անապատ կոչեցեալ...» (էջ 155): Ինչպես տեսնում ենք, ոչ վիմագրությունը և ոչ էլ պատմիչները ովարագա վանքը անունը բնավ շեն հիշում:

Նոր գրականության մեջ վանքի իսկական՝ Անապատ՝ անունը չի հիշատակվում և դրա փոխարեն, երկի նկատի ունենալով Վարդապավանքից Սուլը Նշանն այս վանքը փոխադրելու հանգամանքը, որի մասին մանրամասն

պատմում է Վարագա վանքի առաջնորդ հայր Ղովհասը № 20 արձանագրության մեջ, Անապատ վանքն անվանում են «Ընոր Վարագ», «Վարագա Սովոր Նշան»<sup>4</sup>, «Ուկատ Վարագ»<sup>5</sup>, կամ պարզապես «Վարագա վանք»:

Նկատի ունենալով հայր Ղովհասի արձանագրության պատմական նշանակություն ունենալու և վանքը նոր անոնով կոչելու հանգամանքը, այսուեղ կրերենք այդ արձանագրության կարեոր մասը, քաղվածաբարպահի թվ. ՊԶ (680—1231) ընդ այս աշխարհայության հարաւագանաւ ցասմանն Աստուծոյ գաւառն Խլաթա ի ձեռն Խորագին և Թաթարին, ընդ որս և մեծահոշակ և ուստին Վարագ... յայսմ ամի ես Ղովհաս, հայր Վարագա, առեալ զտիեղերահամբաւ Ս. Նշանս... զվեց ամ շրջեցա թափառեալ ի տեղո ի տեղի կամս յառաջատես խնամոցն Տեսան հասի ի նոր բերդ առ քրիստոսաէր իշխանն Վասակ և յաստուածաբարնակ Անապատ կոչեցեալ վանքս, և ազգումն ինչ եղե առ իս հաճոյա-

նալ Ս. Նշանիս ի տեղուցս, նկատեցի և զգեղաղեց եկեղեցիս արժանի հանգստեան սորակ և մեծարեալ ի բնակիցս, առի զվանքս և ետու յեկեղեցիս Աստուծոյ, միջնորդութեամբ և վկայութեամբ տեառն Յոհաննիսի, շինողի եկեղեցւոյ...»:

Վերը հիշյալ նկատի ունենալով, կարծում ենք, որ ճիշտ կիմնի հուշարձանների այս խոմբն անվանել Անապատ կամ նոր-Վարագ, այդպիսով թի' վերականգնված կիմնի հին անոնմը, և թի' պահանգած նորը՝ ճիշտ իմաստով:

Ինչ վերաբերում է հուշարձաններից յուրաքանչյուրին՝ առանձին, պետք է ասել, որ դրանցից միայն մեկի՝ կաթուղիկե եկեղեցու անոնն է մեզ հասել, այն էլ Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ (էջ 146), որտեղ ասված է. «Եւ եղե աւարտումն եկեղեցոյն, որ օծաւ և կնքեցաւ յանուն Սրբոյ Աստուծածնին», որը Վասակի № 19 արձանագրության մեջ կոչվում է «մեծ եկեղեցի»:

### ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՇԻՆՈՂՆԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Ինչպես վիմագրությունից, հատկապես ամենահին, թերի մնացած, մեր № 11 (Ութ= 1193 թվակիր) արձանագրությունից երեսում է, Անապատը եղել է Նոր-բերդի Կյուրիկյան Բագրատումիների վանքը և պանթեոնը: Այդ արձանագրության մեջ ասված է. «Ես Դափթ, որդի Վասակա, թոռն Կիրդիկէ արքաի, շինեցի զեկեղեցիս և զտապանատուն...»:

Նույն տոհմագրությունը կրկնվում է ինչպես Դափթի մյուս՝ № 3, նաև Աստովածածին եկեղեցու № № 18 և 19 արձանագրություններում, որոնցից վերջինը, Դափթի որդի Վասակի արձանագրությունը, նախորդներից տարբերվում է նրանով, որ այդտեղ Կյուրիկեի անոնք չի հիշատակվում, այլ շեշտը դրվում է Բագրատունյաց ցեղից սերված ինելու վրա:

Այսպիսով ստացվում է նոր-բերդի իշխանների հետեւալ տոհմագրական կարգը, Կյուրիկե-Վասակ Ա., Դափթի (Անապատի շինողը) և Վասակ Բ. (Աստովածածին եկեղեցու շինողը, կամ շինության օժանդակողը):

Նոր-բերդին իշխողներից վերջին երկուսի, այսինքն Դափթի և Վասակ Բ.ի մասին միայն հիշատակություն ունեն այդ ժամանակաշրջանի պատմագիրներ Վարդան Վարդապետը, որը իր «Հաւաքրումն պատմութեան»

4. Ակագեմիկոս Աճառյան, Անձնանումների բարան, հատոր 9, էջ 591, № 304:


5. Եահիմաթումյան, «Ստորագրութիւններ», էջմիածին, 1842 թ., հատոր Բ, էջ 368:

155-րդ էջում հիշում է Վասակ Բ.ի մասին (Աստովածածին եկեղեցու շինության կապակցությամբ), անվանելով նրան «Թագաւորակն Բագրատունին», և Կիրակոս Գանձակեցին, որը մանրամասն պատմում է Դափթի և Կյուրիկյանների գլխավոր ճյուղի ժառանգ, վաղամեռիկ Արասի ապօրինի որդի Ազարթանի մասին, որը ժամանակակից էր պատմիչն, և Վասակ Բ.ի մասին: Բերենք պատմիչից այդ հատվածը քաղվածաբար: «...Աղսարթան, որ եղե ժառանգակալ Մածնաբերդոյ, այր աստուածապաշտ և քահանալասէր: Սա որ եհաս յաւուրս մեր, սորա ի ծերութեան ցաւեցին ոտք. ընդ սա ինարէութեամբ վարեցաւ Դափթի իշխանն նոր բերդին, զի էր և նա յաղդէ Բագրատուննեաց, հայրն Վասակա իշխանն, որ շինեաց զեկեղեցին հրաշազան ի վանքն՝ որ Անապատն կոչի, հուպ ի նոր բերդն, առաջնորդութեամբ և ձեռնադրութեամբ արքեապակուպուն Յոհաննիսի Տուեցոյ քաղաքին Շամբորոյ, և Գարդմանայ, և Երգելանիցն, և Տէրունականին, և Տաւոյոյ, և այլ կողմանց իշխանութեան Վահրամաւ իշխանի: Եւ եղե աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կնքեցաւ յանուն Սրբոյ Աստուծածնին ի ՈՉԹ թուականին Հայոց: ...Իսկ Դափթ իշխան նոր բերդին ինարեաց զմանուկն Աղսարթան և փեսայցուց զնա ի դուատրիւր. և ինքն տիրեաց Մածնաբերդոյ, և ապա եհան զդուատր իւր ի նմանէ: Իսկ Աղսարթանայ իւր արարեալ դրնակիչս իւր բերդին,

յանկարծակի յեղակարծ ժամու ըմբռնեալ զ՞նափիթ հանդերձ ամենայն ընտանեօքն հանին արտաքս ի բերդէն և ետուն զբերդն յԱղսարթան»:

Ինչպես Կյուրիկյանների, նույնպես և նորբերդի իշխանների տոհմագրությունը և դրանց փոխհարաբերությունները պարզելու տեսակետից այդ հատվածը կարեոր է: Ինչպես երեսոմ է, պատմագրի համակրությունը Աղսարթանի կողմն է, որը, չնայած Արասի ապօրինի որդին լինելու հանգամանքին,

Այս առթիվ Կ. Ղաֆադարյանն իր «Պատմահագիտական դիտողություններ Նոր-բերդի Կյուրիկյան իշխանության մասին» հոդվածում<sup>6</sup> աներկրա այն կարծիքն է հայտնում, որ Վասակ Ա.ի հայրը Կյուրիկե Գ.ն է, որը «թագավորել է 12-րդ դարի երկրորդ կեսին, 1145 թ. մինչև 1185 թ. ... Սակայն Նոր-Վարագա վանքի արձանագրություններից պարզվում է, որ Կյուրիկե Գ.ն ունեցել է նաև մի ուրիշ որդի՝ Վասակ անունով, որը Նոր-բերդի Կյուրիկյան ճյուղի հիմնադիրն է»: Հետեւ-



Անապատ կամ Նոր-Վարագ վանքի բներանուր տեսարանը հարավ-արևելքից

Կյուրիկյանների գլխավոր ճյուղի օրինական ժառանգն է ճանաշլում, իսկ Դավիթը հիշվում է լոկ «յազգէ Բագրատուննեաց»: Զի կարելի ասել, որ պատմիչը համակրում է Աղսարթանին, որովհետու նա էլք ասյր աստումածապաշտ և քահանայատէր», չէ՞ որ Դավիթին էլ «աստուածասէր» էր, որովհետու Անապատ վանքն էր շինել, մի բան, որը չէր կարող պատմիչին ծանոթ չինել: Նման վերաբերմունքը թերևս հասկանալի լինի հետևյալ հարցի լուծումից:

Այդ կարեռ հարցն այն է, թե ո՞ր Կյուրիկեից էր սերված Նոր-բերդի իշխանական տոհմը:

Վապես 19 տարեկան հասակում մահացած Արասը և Նոր-բերդի իշխան Վասակ Ա.ն եղբայրներ էին:

Սակայն, նկատի ունենալով հուշարձանի վիմագրական տարեթվերը և Կիբակոս Գանձակեցու մի քանի որոշակի տեղեկությունները, գաղիս ենք այն եղակացության, որ Անապատը շինող Դավիթ Նոր-բերդցու հայր Վասակ Ա.ը չէր կարող Կյուրիկե Գ.ի որդին լինել, հետևյալ պատճառներով.

6. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական գիլիակ «Տեղեկագիր», 1940 թ., № 4-5, էջ 165-180:

1. Հաստ Գանձակեցու, Կյուրիկի Գ.ը և... փոխարք յաշխարհէս, թողու ժառանգակալ զորդի իր զմանուկ Արաս երկոտասանամեարյ, Խնչպես վերը հիշված է, Կյուրիկի Գ.ը վախճանվել է 1185 թվականին, հետեւապես Արասը ծնված է եղել 1173 թվականին, և վախճանվել է «ամաց ըննից և տասանց», ուրիշն 1192 թվականին:

Նրա (Արասի) ապօրինի որդի Աղասրթանը չոր մահվան ժամանակ եղել է «մանուկ մի տանգեայ», որը մկրտված էլ չի եղել, որովհետև Արասի քույր Բյուրինան «առնու զմանուկն և մնուցանէ, և անուանեաց զանուն նորա Աղասրթան», հետեւապես Աղասրթանը ծնված է եղել իր հոր մահվան տարում, այսինքն 1192 կամ 1191 թվականին:

Աղասրթանն ամուսնանում է տղայության հասակում, որովհետև «...Դավիթ իշխան նոր բերդին խաբեաց զմանուկն Աղասրթան և փեալյացուց զնա ի զուտար իր», հետեւապես մոտ 15—16 տարեկան հասակում, այսինքն 1207 կամ 1208 թվականին:

Նկատի ունենալով, որ Դավիթ նոր-բերդցին 1193 թվականին սկսել է շինել Անապատը և տապանատունը, այսինքն այդ ժամանակի այնպիսի տարիք է ունեցել, որ իր մահվան և հոգու փրկության մասին է մտածել, և որ 1207/8 թվականին հարսնացու, թիրես հասուն ալջիկ է ունեցել, որովհետև «իմարեաց զմանուկն Աղասրթան», թվում է թիմալված շնոր լինի, եթե նրան, իր զուտքը ամուսնության (1207/8) թվականին համարինք շուրջ 50—55 տարեկան հասուն և փորձված մի մարդ, որն այդ հաշվով պետք է ծնված լինի մոտ 1152—1157/8 թվականին: Այսպիսով Դավիթն Արասից շատ մեծ է և ժամանակակից Կյուրիկի Գ.ին (իշխան 1145—1185 թ. թ.), թեև նրանից տարիքով բավական փոքր:

2. Մի կողմ թողնելով երկու եղբայրներից մեկի որդու և մյուսի թոռան (Արասին և Վասակ Ա.ին եղբայրներ ընդունելու դեպքում) ամուսնության խնդրում «հասաի կամ շշասաի հարցը, կարմոր մնք համարում նշելու Գանձակեցու հետեւալ խոսքերը, երբ նա նկարագրում է Արասի մահից հետո նրա քույր Բյուրինայի մտատանջությունը»: Գանձակեցին գրում է, ոիրքն ետես քոյր նորա Բյուրինայի

անուն, եթէ բնաշինչ եղաք յազգէ՝ անհնարին սգով վարանէր», որից հետո նա տեղեկանալով, «եթէ է կին մի, որ ոմի մանուկ մի ստովեայ յեղբօրէն քումմէ», զվարթանում է և վերցնելով այդ մանկան, դարձնում է ժառանուն իր առզգի:

Այստեղ ինքնըստինքյան հարց է առաջանում, թե ինչո՞ւ պետք է վարաներ և սգար Բյուրինան իր «ազգաի բնաշինչ լինելու մասին, երր, ըստ վերոհիշյալ տեսակետի, կային այդ «ազգաի օրինավոր և աւելի իրավատեր ժառանգորդները՝ Կյուրիկի Գ.ի որդի Վասակ Ա.ն և նրա որդի Դավիթը, որոնք առաջնության իրավունք պետք է ունենալին նույնիսկ Արասի նկատմամբ: Եթե դրանցից առաջինի՝ Վասակի՝ այդ ժամանակում կինդանի լինելը հարցականի տակ լինի, փոխարենը երկրորդը՝ Դավիթը՝ հաստատապիս կար: Այսպիսով, վերոհիշյալ տեսակետն ընդունելու դեպքում, որևէ կերպ չի կարելի համաձայնվել, որ Բյուրինան «անհնարին սգով վարանէր», որովհետև Կյուրիկի Գ.ի ժառանգությունն առանց այլեւայլի կանցներ նրա օրինավոր ժառանգին՝ Վասակ Ա.ին կամ նրա որդի Դավիթին՝ և կարիք չէր լինի ապօրինի ծնված մի ժառանգ մեջտեղ թերել:

Այս բոլորը նկատի ունենաւով կարելի է անել հետեւալ եղբայրացությունը.

1. Անապատի շինող, նոր-բերդի իշխան Կյուրիկյան-Բագրատոսի Դավիթի հայր Վասակ Ա.ը չէր կարող Կյուրիկի Գ.ի՝ որդին լինել, այլ, համանաբար, նոր-բերդի տիրակալները սկրված են եղել Կյուրիկի Բ.ից: Կյուրիկի Բ.ի մահվան թվականի մասին հետեւալն է ասում «Ոռոհի Կիրիկեան թագաւորներու պատմության» աշխատության հեղինակ Հ. Ղևոնդ Մովսեսյանը. «Թագաւորիս մահուան թուականը որոշ չէ. վերջին անգամ կը յիշուի 1089-ին, ուստի հաւանաբար մահը 1089—1100 թուականներուն պատահած պիտի ըլլայ՝ քանի որ իր յաջորդն 1105 թուին կը յիշուի»<sup>8</sup>:

2. Նախորդ կետում հիշված եղբայրացությունն ընդունելու դեպքում, հասկանալի

7. Կյուրիկեների հերթականությունը ամեն տեղ բերված է ըստ Կ. Ղաֆարյանի:

8. Հ. Ղևոնդ Մովսեսյան, Լոռիի Կիրիկեան թագաւորներու պատմութիմը, Վիեննա, 1923 թ., էջ 59:

կլինի Աբասի քուլը Բյուրինայի մտահոգությունն իր առզգության միջին լինելու մասին և Աղսարթանին իր տոհմի օրինական ժառանդը ընդունելու փաստը։ Հասկանալի կլինի նաև Կիրակոս Գանձակեցու համակրությունն Աղսարթանի նկատմամբ և Գավթի՝ Մածնաբերդին տիրելու փորձի՝ պախարակումը։

Թամարա թագուհու և նրա անմիջական հետևորդների ժամանակ վրաց պետության զորեղանալու պատճառով, Կյուրիկյանները կորցրել էին ոչ միայն իրենց քաղաքական իրավունքները, այլև կալվածքները։

Կյուրիկյանների դրությունն ավելի վատթարացավ սելցուկների տիրապետության ժամանակի։ Այսպիսով, ըստ Վարդան վարդապետի «Հաւաքումն պատմութեան» (Էջ 106), Դավիթ Անհողինի 13 բերդ ունեցող պետությունից, մեզ հետաքրքրող շրջանում, նրա ժառանգորդներին մնացել էր միայն մեկական բերդ, որոնցից պլատոր ճյուղի ներկայացուցիլ Աղսարթանը տիրապետում էր Մածնաբերդին, իսկ երկրորդ ճյուղի ներկայացուցիչները՝ Դավիթը և նրա որդի Վասակ Բ.՝ նոր-բերդին։ Ինչպես տեսնում ենք, Կյուրիկյան տոհմի այս ժառանգներից յուրաքանչյուրը մի փոքրիկ իշխան էր, «իշխանաց իշխան» փքուն տիտղոսով (տես արձ. № 18)։

Հիշալ բերդերից նոր-բերդը, որին Վարդան պատմիշը վերագրում է, իսկ Գանձակեցին շատ մոտ է Համարում («Շուպ») Անապատը, ըստ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի («Արցախ», էջ 359), գտնվում է այդ վանքի և իշխանի շրջանի կալ գյուղի միջև «Յիշ քար» կոչված ժայռի վրա։ Թե որքան ճիշտ է նոր-բերդի այդ տեղադրությունը՝ առել շնոր կարող։

Հուշարձանների խմբից բուն Անապատը, որն ամենահին մասն է, շինել է Վասակ Ա.ի որդի Դավիթը, որի մասին մանրամասն հիշեցինք վերը։

Անապատի շինության մասին, հուշարձանի վրա պահպաժ է երեք արձանագրություն, № № 3, 5 և 11։ Դրանցից № 5-ը՝ մի խաչքարի վրա՝ անթվակիր է, իսկ № 11-ը, որը կիսառ է մնացել, կրել է Ութ (642)՝ 1193 թվագրից։ Ասում ենք կրել է, որովհետև այդ թվագրիր սուրբ գործիքով խփված, եղծված է,


և միայն գրերի հետքերով կարելի է վերծանել։ Այս արձանագրության մեջ հիշվում է նկեղեցու և տապանատան շինության մասին և փորագրված է տապանատան մուտքի ճակատաքարի վրա։ Այդ արձանագրության պակասը լրացնում է № 3-ը, որը փորագրված է եկեղեցու մուտքի ճակատաքարի վրա և լրիվ է, ուստի և այսուղի բերում ենք որոշ կրծատումներով։ «Ես Դավիթ որդի Վասական թոռն Կյուրիկէ արքաի շինեցի զԱնապատս իմ իշխանութեանս, ձեռամբ վարդապետին Միհիթարա, և ի Ունէ թվիս շինեցի զեկեղեցիս ձեռամբ հաւաք Գրիգորու և նորին արքանեկին Պետրոսի և եղբարց նորու Ցովանիսի և Ազսրիայի, և հոռու հող ի Տանձեկու և յեզ զեր գետին և զորափառն ընգուզի ի շաղացէն Համբոն մինչ միուլուտն Խարբի և շաղաց մի և ի Բախն արդի, և շինական մի...»։

№ № 3 և 11 արձանագրությունները, բացի Կյուրիկյան տոհմի երկրորդ ճյուղի մասին տված կարևոր տեղեկությունից, որի մասին վերը հիշեցինք, պարզաբանում են նաև մի բանի արժեքավոր հարցեր։

1. Այն հանգամանքը, որ ըստ Ժամանակադրական կարգի առաջին շինարարական րիուլիթի № 11 արձանագրությունը փորագրված է ոչ թե եկեղեցու, այլ տապանատան մուտքի ճակատին, թեև տեքստում առաջ եկեղեցու մասին է հիշվում՝ «շինեցի զեկեղեցիս և զտապանատումս», դրան ավելացրած այդ արձանագրության միստար մնալը, իրավունք է տալիս ենթադրելու, որ տապանատան շինությունից հետո Անապատի շինարարությունը մի առժամանակ ընդունավուիլ է։ Այդ կարծիքը հաստատում է շինարարական հաջորդ (№ 3) արձանագրությունը, որը փորագրված է արդեն եկեղեցու մուտքի ճակատաքարի վրա։ Այս վերջին արձանագրության մեջ, որն սկզբում թվագիր չընի, Դավիթ իշխանը հիշատակում է, որ շինել է Անապատը Միհիթար վարդապետի ձեռքով և հետո ավելացնում է «և ի Ունէ թվիս շինեցի զեկեղեցիս ձեռամբ հաւաք Գրիգորու» և այլն։ Եկեղեցին Ունէ թվականին շինելու շեշտումը և սկզբում Միհիթար վարդապետի և ապա հայր Գրիգորի ձեռքով շինարարությունը կատարելու հիշատակությունները գալիս են հիմնավորելու վերը հիշեած կարծիքը և № 11-րդ

արձանագրության ՈԽԲ թվագրի վերծանության ճշտությունը:

2. Տապանատան ճակատի № 11-րդ (ՈԽԲ թվակիր) արձանագրության մեջ փաստորեն ՈԽԲ թվականին շինուած եկեղեցու կառուցման մասին հիշատակություն անելը ևս մի փաստէ, որ գալիս է ապացուցելու շինարարությունը չվերջացած դրա մասին կանխորեն արձանագրելու սովորություն: Նման մի փաստ կա նաև Աստվածածին եկեղեցու վրմագրության մեջ, որի մասին կհիշվի իր տեղում:



Անապատի եկեղեցու արևմտյան ճակատը

3. Կարեռագույն տեղեկությունը, որ մեզ առաջի է № 3 արձանագրությունը, դյուլոցիության սոցիալական դրության մասին չէ: Դավիթը մի շարք անշարժ կալվածքների (հող, աբգի, պարտեզ, ջրաղաց) հետ միասին լանքին նվիրում է նաև մի շինական: Այդ փաստը, ի շարս մի քանի այլ հուշարձանների վիմագրության մեջ պահպան հիշատակությունների, ապացուցում է, որ մեր վանքերը 12—13-րդ դարերում ունեին ճորտ գյուղացիներ:

4. Նման փաստի մասին հիշել ենք «Էջմիածին» ամսագրի 1951 թվականի հունիս-օգոստոսի համարում, էջ 50, «Թարձրագաշ վանքը և նրա վիմագրությունը» հոդվածում:

Ամփոփելով բուն Անապատի շինարարության և շինողների մասին եղած վիմագրական տվյալները, ստանում ենք հետևյալը:

Անապատի կառուցողը եղել է Կյուրիկի թագավորից սերված Վասակ Ա. ի որդի Դավիթ թագարատունի-Կյուրիկյան իշխանը: Շինարարությունն սկսվել է ՈԽԲ (642)=1193 թվականին և վերջացել ՈԽԲ (647)=1198 թվականին: Կառուցման դեկավարները եղել են, տապանատան համար Մխիթար վարդապետը, իսկ եկեղեցունը՝ հայր Գրիգորը: Վեր-

շինի ռարբանեակա Պետրոսը և նրա եղբայրներ Հովհաննեսը և Ազարիան հավանաբար եղել են ճարտարապետ և կառուցող վարպետներ: Այսուել պետք է ավելացնել նաև № 7 արձանագրության մեջ հիշված Հաղարդիկին, որը շինարարության համար քար է կրել:

Բուն Անապատի մասին մեր նյութը վերջացնելու համար, մնում է ասել հետևյալը: Թեև գավիթը և եկեղեցուն հարավից կից մատուցը մտնում են Անապատի կոմպլեքսի մեջ, սակայն դրանց շինության մասին հատուկ հիշատակություն չկա: Արդյոք դրանք ՈԽԲ թե ՈԽԲ թվականին են շինվել, կամ թե ավելի ուշ՝ դժվար է ասել:

Աստվածածին կարուղիկե եկեղեցու շինության մասին տեղեկություն են տալիս թե այդ եկեղեցու վիմագրությունը և թե՝ Կիրակոս Գանձակեցին ու Վարդան վարդապետը:

Կիրակոս Գանձակեցուց համապատասխան քաղվածքը մենք բերինք Կյուրիկյանների տանմագրության մասին խոսելիս <sup>10</sup>:

Պատմիչ Վարդան վարդապետն ասում է հետևյալը (էջ 153—155). «Ճեզօթն հարիւր և երկոտասան թոփն հանգեաւ ի Թրիստոս անուանի ճնաւորն և արժանաւորն պատուելի աստիճանաց և կոչմանց, ուր կոչեաց շնորհն Աստուծոյ ի քահանայութիմ, ի վարդապետութիւն և յարքեպիս կուպոսութիւն տանն Գարդմանայ և այլոց բերդից և գաւառաց, այրն անուանի և յերկանի աշխարհի՝ տէրն Յովհաննէս Տուեցին անուանեալ.....հանգեաւ ի Թրիստոս, ի Հուչակաւոր վանսն նոր բերդին Անապատ կոչեցեալ. Թաղեցաւ ի դուռն եկեղեցուն, զոր իւր իսկ էր շինեալ, և այլ բազուած շինուած և արդինս վաստակեալ հրամանաւ, կամօք և ձեռնոտութեամբ Վասակայ թագաւորացին Բագրատումուր»:

Վիմագրության մեջ Աստվածածին եկեղեցու շինության մասին Հիշատակություն կա № 18 և 19, նաև հին Վարդան վանքի վանահայր Հովհանի № 20 թվակիր արձանագրությունների մեջ:

Այդ արձանագրություններից № 18-ը փորագրված է կաթուղիկեի արևատոյան մուտքի բարագրի (վերնայամի) գրա: Այս արձանագրությունը կիսատ է (վերջավլորդությունն անընթեռնելի է), բացի այդ, թվագրի առաջին երկու գրերի (հարյուրավորի և տասնամբորի) տեղում քարը չարդված է: Բովանդակությունը հետևյալն է. «Ժ թվ. Ա. 9 շինեցաւ եկեղեցին ձեռամբ Յովհաննէս վարդապետի, հրամանաւ և իշխանութեամբ իշխանաց փշիանի Վասակա որդոյ [Դավիթի թոլով] Կիւրիկէի արքաի և սահմանեցաք գսա ազատ...», շարունակության մեջ, հավանաբար, պիտի լինի «յամենալն չարեաց» կամ «հարգաց»:

№ 19 արձանագրությունից բերում ենք միայն շինարարությանը վերաբերող մասը.

10. Այստեղ ստիպած ենք նշել, որ Կ. Ղաֆարյանը իր հոգածում (Տեղեկագիր, 1940 թ., № 4—5, էջ 167) իրուր է սիալված համարում Կ. Գանձակեցուն, ասելով, որ իրքի թե պատմիլը «... ամբողջ շինությունը, կամ ավելի ճիշտ կլինի ասել, Անապատի շինությունը վերագրում է Վասակին», այնինչ պատմինը 146-րդ էջում պարզապես միայն Աստվածածին եկեղեցու շինությունն է վերագրում Վասակին, ասելով. «... որ [Վասակ] շինեց զեկեղեցին հրաշազան ի վանքն, որ Անապատ կոչեալ»:

«Ի թվին ՈԶԶ, ի թագաւորութեան Ռուազուքան դատերի, և Վասակ, որդի Գաւթի, որդո Վասակա, ի տանէ Բագրատումի, ի տոհմէ Դաւթա մարգարէի, ի փառս Աստուծոյ կատարեցի զեկեղեցիս, զոր շինեցի ի ձեռն տեսան Յովհանէսի և ընծայեցի զՄաղկնագութիւն իւր կոպարովն ի վանքս, և հաւանութեամբ եղագարցս հաստատեցաւ ինձ պատարագ Յայոնութեան և Զատիկն յիմ շինեալ մեծ եկեղեցին, որպէս իմ հաւին յիւր շինեալ փոքր եկեղեցիսն: Դրեցաւ և կնքեցաւ անուամբն Աստուծոյ, յաւուր որում Վարդապահ հայրն Դուկաս զՍուլդր նշանն ետ յեկեղեցիս...»:

Ինչպես տեսնում ենք, ըստ Կիրակոս Գանձակեցու և № 19 արձանագրության, վանքի շինող է հանդիսանում նոր-բերդցի Վասակ թ. Կյուրիկիան-Բագրատումի իշխանը, իսկ ըստ Վարդան պատմիչի և № № 18 և 20 արձանագրությունների՝ Հովհաննէս վարդապետը: Մեր կարծիքով այս, ըստ երևույթին տարրեր հիշատակությունները կարելի է հաշտեցնել, բնոդանելով, որ եկեղեցու շինությունը կատարվել է Վասակ թ. ի հրամանով և նյութական օժանդակությամբ (ձեռնոտվությամբ), իսկ շինողը, այսինքն շինության սախաձեռնողը, զեկավարը, թերևս և ճարտարապետը եղել է Հովհաննէս վարդապետը, ուստի եկեղեցու շինողների մասին եղած հիշատակությունների ձևակերպումներից հաջողը պետք է համարել պատմիչներից Վարդապետինը, իսկ վիմագրության մեջ՝ № 18 թերի արձանագրությունը:

Աստվածածին կաթուղիկե եկեղեցու շինության մասին եղած հարցը փակելու համար, մնում է մի երկու խոսք ասել վիմագրության մեջ հիշվող Հովհաննէս վարդապետի (վանահոր) և պատմիչների հիշատակած Հովհաննէս Տուեցի հոչակավոր վարդապետարքեպիսկոպոսի մասին: Այս հարցը բարձրացնում ենք, որովհետև բանահիրության մեջ երբեմն գրանք տարրեր անձնավորություններ են համարվում: Օրինակ. ավագեմիկոս պրոֆ. Աճայիանի «Անձնանումների բառարան»ի Գ. Հատորում, 591 էջում, № 304-ի տակ բերլում է Հովհաննէս վարդապետը, իսկ 592 էջում՝ № 308-ի տակ՝ Հովհաննէս Տուեցի արքեպիսկոպոսը, իբրև տարրեր անձնավորություններ, երկուան էլ նոր-բերդի եկեղեցու շինողները: Մեր կարծիքով այս երկու անուաններն էլ վերաբերում են միանույն անձին: Անապատի Աստվածածին եկեղեցու շինողը Հովհաննէս Տուեցին. է,

սկզբում վարդապետ և հետո արքեպիսկոպոս, որը մինչև իր մահը (1263 թ.) եղել է այդ վանքի վանահայրը և այնտեղ էլ թաղվել, ըստ պատմիշ Վարդան վարդապետի:

Խնձորես վերը բերված վիմագրական և պատմագրական քաղվածքներից տեսանք, այս եկեղեցու շինության մասին հետեւյալ երեք թվական հիշատակությունները կան, տարբեր արտահայտություններով.

ա. № 18 արձանագրությունը .. Գ եղծված թվագրով. «Հինեցաւ եկեղեցիս».

բ. Վասակի № 19 արձանագրությունը ՈԶԶ թվագրով. «կատարեցի զեկեղեցիս, զոր շինեցի».

գ. Կիրակոս Գանձակեցու հիշատակությունը. «և եղեւ աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կնքեցաւ... ի ՈԶԹ»:

Դրանցից № 18 արձանագրության եղծված թվագրից կարող է լինել ՈՀԳ կամ ՈԶԳ, Մենք այս կարծիքին ենք, որ այս արձանագրությունը շինարարության սկզբին է վերաբերում և հետևապես պետք է թվագրիր եղած լինի ՈՀԳ, որովհետև հուշարձանի պատերին կան ՈՀԹ թվակիր № № 24 և 25 և ՈԶ թվակիր № 20 արձանագրությունները, որոնց առկայությունը հաստատում է շինարարության այդ թվականից առաջ սկսված լինելը. Այս խնդրում մասնավորապես արժեքավոր են հայր Ղուկասի № 20 արձանագրության մեջ ճնկատեցի և զգեղաղեց եկեղեցին արժանի հանգստեան սորա (Ս. Նշանի) խոսքերը, որոնք ապացուց են, որ ՈԶ թվականին եկեղեցու շինարարությունը հիմնականում արդեն ձևավորված էր և նկատվում էր նրա սպառագաղեց և Ս. Նշանի հանգստյան արժանի լինելը:

Խնձորեբերում է շինարարությունը շվերշացած այդ մասին արձանագրելու հանգստանքին, այդ արդեն, ինչպես վերը՝ Անապատի մասին գրելիս՝ հիշեցինք, ժամանակի սովորույթ էր: Այս եղրափացությունն է հաստատում նաև Վասակի № 19 ՈԶԶ թվակիր արձանագրությունը, որտեղ ասված է. «Կատարեցի զեկեղեցիս, զոր շինեցի»: Այս թվագրով «կատարմանման է վերաբերում, այսինքն շինարարական գործունեությունը վերշացնելուն: Եթե նկատի ունենանք Կյուրիկյանների այդ ճյուղի նման մի փոքր իշխանության տնտեսական ևուղ պայմանները

և երկրի քաղաքական բարդ և ծանր դրությունն այդ ժամանակ (Խորեգմշահ Զալալեղինի և դրա հաջորդող մոնղոլների արշավանքները), հասկանալի կլինի, որ նման խոշոր մասշտաբի շինարարությունը պետք է տարիներ տևեր, քանի որ անհամեմատ պվելի լավ պայմաններում և ավելի փոքր շինարարությունը նույն վանքում (բուն Անապատ) Դավիթ իշխանը կատարել էր 5—6 տարում:

Իսկ ինչ վերաբերում է Կիրակոս Գանձակեցու հիշատակած ՈԶԹ թվագրին, ուս պարզապես հուշարձանի օծմանը և անվանակությանն է վերաբերում, որը վերոհիշյալ քաղաքական պայմաններում կարող էր նույնպես շինարարությունը վերշացնելուց մի քանի տարի հետո տեղի ունենալ, եթե ավարտված կլինեին նաև շինարարական բնույթի մնացած մանր աշխատանքները և ներքին սարքավորումը, որով «եղեւ աւարտումն է շեն հավասար», այլ լրացնում են եկեղեցու ավարտման պրոցեսը:

Եկեղեցու անվանակությունը ավելի ուշ կատարվելուն ապացուց է նաև այն փաստը, որ № 19 արձանագրության մեջ շինարարություն եկեղեցու անունը:

Այսպիսով գալիս ենք այն եղբակացության, որ Աստվածածին եկեղեցու շինարարությունն սկսվել է ՈՀԳ (673)=1224 թվականին և վերշացել ՈԶԶ (686)=1237 թվականին և օծվել ու անվանակությունը ՈԶԹ (689)=1240 թվականին: Այսպիսով այս հուշարձանի շինարարությունը տեղի է 13—14 տարի:

Ժամատունն, ըստ ժամանակագրական կարգի, ամենից վերջն է շինված, սակայն դրա շինության ժամանակի և շինողի մասին որևէ տեղեկություն չի պահպել: Սակայն, նկատի առնելով Աստվածածին հուշարձանի շինության կատարման մասին եղած № 19 արձանագրության ՈԶԶ և ժամատան մուտքի ճակատագրի վրա փորագրված Հայրութի արձանագրության ԶՓ թվագրերը, պարզ է, որ այս հուշարձանը շինված է 1237—1261 թվականների ժամանակամիջոցում, Հովհաննես Տուեցու օրոք, որի անունը հիշակառած է Հայրութը:

(Շարունակելի)